



Կարգապահական գործ թիվ 17027

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի նոյեմբերի 16-ի թիվ 172-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/101-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի, Տարոն Սիմոնյանի, Մելանյա Առուստամյանի, Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի և Նելլի Հարությունյանի, քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Վահե Գրիգորյանին (արտոնագիր՝ 450) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Չ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

21.04.2017թ. Պալատում մուտքագրվել է փաստաբան Գևորգ Գևորգյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է հետևյալը: Համացանցի «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում «Attorney at Law» խմբում, որը տվյալ պահին ունեցել է 422 անդամ, և որում ներգրավված են փաստաբաններ և իրավաբաններ, փաստաբան Տիգրան Աթանեսյանը 06.04.2017թ. կատարել է հետևյալ գրառումը՝ *Սա պալատականների պատասխանն է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին հասցեագրված իմ բողոքին: Երբ որ ասում եմ, որ պալատը անհույս կառույց է, մի քանի հար փաստաբան փորձում են ինձ առարկել՝ վկայակոչելով ինչ-որ ամորֆ համայնքի միասնականության գաղափարներ: Այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով, իսկ հետևում, ինչպես միշտ թաքնվել է «սիրելի» նախազեն: Վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորն ապացուցում է, թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական*

դաստիարակության պակասը: Տավրք, գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ:

Փաստաբան Վահե Գրիգորյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), 06.04.2017թ. պատասխանելով փաստաբան Տիգրան Աթանեսյանի գրառմանը, շարադրել է հետևյալ միտքը՝ *Ինձ թվում է, որ դու պետք է փաստաբանների դպրոցում ժամեր վերցնես դասավանդելու համար "Ինչպիսին չպետք է լինեն Փաստաբանների պալատը և այն ներկայացնող անձինք" թեմայով և որպես ուսումնական նյութեր ունկնդիրներին բաժանես քո գործերով և դիմումների հիման վրա քեզ ուղղված նամակները...* Իսկ այդ նամակի 2-րդ կետին նախորդող պարբերության հեղինակը, որի մտքով անցել է նման պատասխան գրել փաստաբանին, իմ կարծիքով տառապում է կրիտիկիզմով՝ մի հիվանդություն, որը որոշակի հորմոնային անբավարարության հետևանքով ժամանակին շեշտակիորեն դանդաղեցրել կամ առհասարակ կասեցրել է անձի մտավոր զարգացումը: Դրա համար չեմ օգտագործի նրա նկատմամբ վիրավորական արտահայտություն՝ հասկանալով, որ դա ֆիզիկական դիսֆունկցիայի հետևանք է:

Դիմելով Պալատին՝ փաստաբան Գևորգ Գևորգյանը խնդրել է կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Վահե Գրիգորյանի նկատմամբ և քննարկել նրա վերոնշյալ վարքագիծը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 10.05.2017թ. թիվ 127-Ա/ԿԳ-17027 որոշման հիման վրա փաստաբան Վահե Գրիգորյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.2.3, 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ: Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել Գևորգ Գևորգյանը:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին:

Պալատի նախագահի 20.05.2017թ. թիվ 138-Ա որոշմամբ կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Վիկտորյա Կիրակոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողների համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմող Գևորգ Գևորգյանը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը վերահաստատել է դիմումում նշված դիրքորոշումը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

16.06.2017թ. Նախապատրաստողի կողմից Պատասխանողից պահանջվել է բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից ներկայացվել է գրություն, որով

իր կողմից բացատրություն ներկայացնելը Պատասխանողը պայմանավորել է որոշակի փաստաթղթեր և տեղեկատվություն ստանալու հանգամանքով: Հետագայում ևս Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պատասխանողը, պատշաճ ծանուցված լինելով Պալատի խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին, նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 12.07.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն հաստատվել են հետևյալ փաստերը.

- Դիմող Գևորգ Գևորգյանը Դիմումը ներկայացնելու պահին աշխատում է Պալատում՝ զբաղեցնելով ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը, հանդիսանում է փաստաբան:
- 20.03.2017թ. փաստաբան Տիգրան Աթանեսյանը մուտք է արել բողոք Պալատի նախագահի 28.12.2016թ. թիվ 509-Ա/ԿԳ-16226 որոշման դեմ, որը մակագրվել է դիմող Գևորգ Գևորգյանին և վերջինս գրությամբ պատասխանել է Տիգրան Աթանեսյանի բողոքին:
- Տիգրան Աթանեսյանը պատասխանը ստանալուց հետո 06 ապրիլի 2017թ. այն տեղադրել է Attorney At Law ֆեյսբուքյան խմբում, որը տվյալ պահին ունեցել է 422 անդամ և կատարել է հետևյալ գրառումը. *«Սա պալատականների պատասխանն է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին հասցեագրված իմ բողոքին: Երբ որ ասում եմ, որ պալատը անհույս հիվանդ կառույց է, մի քանի հար փաստաբան փորձում են ինձ առարկել, վկայակոչելով ինչ-որ ամորֆ համայնքի միասնականության գաղափարներ: Այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով, իսկ հետևում, ինչպես միշտ թաքնվել է «սիրելի» նախագեն: Վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորը ապացուցում է, թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական դաստիարակության պակասը: Յավոք գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ:»:*
- Այս գրառման տակ պատասխանող փաստաբան Վահե Գրիգորյանը 06 ապրիլի 2017թ. կատարել է հետևյալ գրառումը. *«Ինձ թվում է, որ դու պետք է փաստաբանների դպրոցում ժամեր վերցնես դասավանդելու համար «Ինչպիսին չպետք է լինեն Փաստաբանների պալատը և այն ներկայացնող անձինք» թեմայով և որպես ուսումնական նյութեր ունկնդիրներին բաժանես քո գործերով և դիմումների հիման վրա քեզ ուղղված նամակները... Իսկ այդ*

նամակի 2-րդ կետին նախորդող պարբերության հեղինակը, որի մտքով անցել է նման պատասխան գրել փաստաբանին, իմ կարծիքով փառապում է կրիտիկիզմով՝ մի հիվանդություն, որը որոշակի հորմոնային անբավարարության հետևանքով ժամանակին շեշտակիորեն դանդաղեցնել կամ առհասարակ կասեցրել է անձի մտավոր զարգացումը: Դրա համար չեն օգտագործի նրա նկատմամբ վիրավորական արտահայտություն՝

- *հասկանալով, որ դա ֆիզիկական դիսֆունկցիայի հետևանք է»:*

Նախապատրաստողը նշել է, որ նշված փաստերն ապացուցվում են ՖԲ էջի գրառումներով, Դիմողի դիմումով:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 13.07.2017թ., Խորհրդի նիստը տեղի է ունեցել 16.11.2017թ. ժամը 18:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2 հասցեում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Պատասխանող Վահե Գրիգորյանը և դիմող Գևորգ Գևորգյանը հանդիսանում են փաստաբաններ:
2. Տիգրան Աթանեսյանը 06.04.2017թ., «Attorney At Law» ֆեյսբուքյան խմբում, որը տվյալ պահին ունեցել է 422 անդամ, կատարել է հետևյալ գրառումը. «Սա պալատականների պատասխանն է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին հասցեագրված իմ բողոքին: Երբ որ ասում եմ, որ պալատը անհույս կառույց է, մի քանի հար փաստաբան փորձում են ինձ առարկել՝ վկայակոչելով ինչ-որ ամորֆ համայնքի միասնականության գաղափարներ: Այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով, իսկ հետևում, ինչպես միշտ թաքնվել է «սիրելի» նախագեն: Վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորը ապացուցում է, թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական դաստիարակության պակասը: Ցավոք, գործող օրենսդրությամբ

յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ»:

3. Տիգրան Աթանեսյանի՝ 06.04.2017թ., «Attorney At Law» ֆեյսբուքյան խմբում գրառման տակ պատասխանող փաստաբան Վահե Գրիգորյանը 06.04.2017թ. կատարել է հետևյալ գրառումը՝ «Ինձ թվում է, որ դու պետք է փաստաբանների դպրոցում ժամեր վերցնես դասավանդելու համար «Ինչպիսին չպետք է լինեն Փաստաբանների պալատը և այն ներկայացնող անձինք» թեմայով և որպես ուսումնական նյութեր ունկնդիրներին բաժանես քո գործերով և դիմումների հիման վրա քեզ ուղղված նամակները... Իսկ այդ նամակի 2-րդ կետին նախորդող պարբերության հեղինակը, որի մտքով անցել է նման պատասխան գրել փաստաբանին, իմ կարծիքով տառապում է կրիտիկիզմով՝ մի հիվանդություն, որը որոշակի անբավարարության հետևանքով ժամանակին շեշտակիորեն դանդաղեցրել կամ առհասարակ կասեցրել է անձի մտավոր զարգացումը: Դրա համար չեմ օգտագործի նրա նկատմամբ վիրավորական արտահայտություն՝ հասկանալով, որ դա ֆիզիկական դիսֆունկցիայի հետևանք է»:

Նշված փաստերը հաստատվում են Դիմողի դիմումով, ինչպես նաև Կենտրոն նույնպես տարածքի նույն Լիլիթ Մուրադյանի 21.04.2017թ. արձանագրությամբ (սպացույցի ապահովմամբ արտատպվել են ֆեյսբուքյան խմբում կատարված գրառումները):

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Վահե Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 08.06.2005թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ սույն վարույթից բացի 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնք կարճվել են:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, լսելով Դիմողի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Վահե Գրիգորյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

7.1. Պալատի խորհուրդը, նախքան փաստաբան Վահե Գրիգորյանի վարքագծին գնահատական տալը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

7.1.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել, որպես օրենքով նախատեսված սահմանափակում, հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում, նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՛ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ **դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի՝ 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով՝**

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները:*

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1

¹ Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:
2 Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

և 15.2 կետերի խախտման համար, ապա միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:

Նույն կերպ պետք է ընկալել ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պարասխանարվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պարվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարավորությունների և պարասխանարվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների մասին, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս ընկնել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:³

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո

³ CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

արդյո՞ք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՛ ոչ:

ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ⁴ բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված **«որոնք նախատեսված են օրենքով»** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատը արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյո՞ք Պալատը փաստաբանի արտահայտվելու ազատությունը Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանափակելով՝ իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՛ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 4) *վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.* 5) *միջոցներ ձեռնարկել **փաստաբանության հեղինակության** բարձրացման ուղղությամբ:* Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ **Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է. որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:**

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ փաստաբանների պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը, դրանով իսկ ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է,

⁴ Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *Փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում*: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ⁵:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը*:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև **Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի⁶ կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները***:

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝ **նպաստել Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, Եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը***:

⁵ St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

⁶ Այսուհետ՝ CCBE

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել փոխյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի փոխյալ մասնագիտությունը⁷:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. «*Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»:* Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները **սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը**»:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է

⁷ Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության, որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի կողմից պատասխանատվություն կրելը, չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ, եթե փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում, նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար, վստահորդը պետք է դիմի դատարանին:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել Պատասխանողի արարքը հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին, թե՛ ոչ:

7.2 Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտման մասով

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:***

Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:***

Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետով ենթակա է որակման փաստաբանի վարքագծի ցանկացած այնպիսի դրսևորում, որն արատավորում է մեկ ուրիշ փաստաբանի՝ որպես փաստաբանական հանրույթի ներկայացուցչի պատիվը, արժանապատվությունն ու համբավը:

Սույն համատեքստում Պալատի խորհուրդը հարկ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- 1. Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին ուղղված արտահայտությունները կարարվել են այնպիսի պայմաններում, երբ նրանք երկուսն էլ հանդես էին գալիս որպես փաստաբաններ, այսինքն՝ իրականացնում էին իրենց կարգավիճակից բխող գործառույթներ և գործողություններ.***
- 2. Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին հասցեագրված արտահայտություններն արատավորում են Դիմողի՝ որպես փաստաբանի՝ պատիվը, արժանապատվությունն ու համբավը:***

Ընդ որում, Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի խախտումն առկա է այն դեպքերում, երբ վերոնշյալ երկու պայմանները միաժամանակ առկա են:

Կանոնագրքի կանոնը՝ այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է, քանի որ չի կարող իր նկատմամբ հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:

Փաստորեն, վերը նշված կանոնի չպահպանումը չի կարող գնահատվել որպես փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստող գործողություն:

Փաստաբանների կողմից միմյանց պատվի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգանքը և դրանից բխող կոռեկտ վարքագիծը փաստաբանական համայնքի՝ որպես մասնագիտական միավորման

կառուցակարգային միասնության, արդյունավետ գործունեության և իրավապաշտպան առաքելության պատշաճ իրականացման գրավականներից է:

Փաստաբանի վարքագծի իրավաչափությունը չի կարող չափվել միայն իր վստահորդների հանձնարարությունները պատշաճ կատարելու հանգամանքով: Փաստաբանի՝ որպես իրավապաշտպան գործառույթ իրականացնող և քաղաքացիական հասարակության մաս կազմող սուբյեկտի վրա դրված են իր հասարակական հատուկ կարգավիճակից բխող պարտականություններ՝ այդ թվում իր գործընկերների նկատմամբ պատշաճ հարգանք դրսևորելու առումով: Նշված և մի շարք այլ պարտականությունների կատարմամբ է որոշվում նաև անհատ փաստաբանի և, ընդհանրապես, փաստաբանական համայնքի հանրային վարկանիշն ու վստահության աստիճանը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ արտահայտության վիրավորական բնույթը կախված է ցանկացած չեզոք անձի կողմից դրա ընկալման ձևից, ինչպես նաև հենց տվյալ արտահայտությունն օգտագործած անձի կողմից այդ արտահայտության սուբյեկտիվ ընկալումից, եթե այն հասցեագրվեր իրեն:

Պալատի խորհուրդը, փաստաբանի արժանապատվությունն ու համբավը ենթադրաբար արատավորած վարքագծին իրավական գնահատական տալիս, ելնում է կատարված արտահայտության վիրավորական լինելու օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներից:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանը չի կարող իրեն թույլ տալ հրապարակայնորեն այնպիսի արտահայտություններ կատարել, որոնք չեզոք անձանց կողմից կարող են ընկալվել, որպես վիրավորական խոսքեր: Այս արտահայտությունները հարիր չեն փաստաբանին:

Վերոնշյալ օբյեկտիվ չափանիշը, այն է՝ չեզոք անձի համար տվյալ արտահայտության վիրավորական լինելու հանգամանքի ապացուցումը բավարար է փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումն արձանագրելու համար:

Սուբյեկտիվ ընկալումը կապված է փաստաբանի կողմից ենթադրաբար այլ փաստաբանի արժանապատվությունն ու համբավն արատավորած վարքագծի դրսևորման հետ համընկած մասնավոր գործոնների հետ՝ տվյալ փաստաբանների միջանձնային հարաբերություններ, տվյալ պահին շփման կոնտեքստ, տվյալ վարքագիծը դրսևորելու արտաքին միջավայր և այլն: Սույն չափանիշը կիրառվում է, երբ օբյեկտիվ չափորոշիչը տվյալ դեպքի նկատմամբ կիրառելի չէ:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից Դիմողին հասցեագրված ֆեյսբուքյան գրառումը եղել է հրապարակային, պարունակել է Դիմողի՝ որպես փաստաբանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող բովանդակություն, քանզի հասանելի է եղել առնվազն ֆեյսբուքյան խմբի 420 այլ անդամներին, այդ գրառմամբ Պատասխանողը Դիմողին ըստ էության անվանել է կրիտիկիզմով տառապող անձնավորություն, ում՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանին հասցեագրված գրության բովանդակությանն ինքը չի անդրադառնում, քանի որ այն գրված է կրիտիկիզմով հիվանդ անձնավորության (Դիմողի) կողմից: Սույն գրառման մեջ Պատասխանողի կողմից օգտագործված

նշյալ արտահայտություններն ակնհայտորեն ուղղված են եղել Դիմողին անձնական վիրավորանք հասցնելուն, նսեմացրել են նրա արժանապատվությունը, անձնական և մասնագիտական համբավը: Գրառման բնույթն ու բովանդակությունը եղել են այնպիսին, որ անկախ գրառման սուբյեկտիվ հանգամանքներից, որպես կանոն չեզոք անձանց՝ նախևառաջ ֆեյսբուքյան խմբի անդամների կողմից միանշանակորեն կարող են որակվել որպես Դիմողին հասցեագրված վիրավորական արտահայտություններ: Ավելին՝ նշված արտահայտությունների բնույթը, այն է՝ հրապարակավ գործընկեր փաստաբանին անվանել որոշակի մտավոր հետամնացությամբ տառապող անձ, ինքնին վիրավորական կհամարվեր նաև Պատասխանողի համար, եթե ուղղված լիներ իրեն:

Չնայած նշված օբյեկտիվ չափանիշների առկայությունը բավարար է փաստաբանի վարքագիծը Կանոնագրքի 5.2.1 ենթակետին համապատասխան որակելու համար, սակայն Պալատի խորհուրդը գտնում է, որ սուբյեկտիվ չափանիշների կիրառմամբ էլ նշված արտահայտությունը հակասում է Կանոնագրքի նշված դրույթին:

Նշված արտահայտությունը, Խորհրդի գնահատմամբ, հանդիսանում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը արատավորող, և ընդունելի չէ փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող անձանց միջև՝ խախտելով Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի պահանջները:

Պալատի խորհուրդը հիշեցնում է, որ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ, ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ, մասնավորապես:

Փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման գործում շատ կարևոր է փաստաբանի և իր գործընկերների միջև հարաբերությունների կառուցումը:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Պալատի խորհուրդն իր որոշումներում անդրադարձել է Կանոնագրքի 5.2.1

ենթակետի կիրառման շրջանակներին: Խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի պահանջը գործում է ցանկացած դեպքում, երբ երկու անձանց միջև հարաբերություններն ընթանում են փաստաբան-փաստաբան հարթության վրա, այսինքն՝ հարաբերությունները կապված են ոչ թե վերջիններիս անձնական, այլ մասնագիտական գործունեության հետ (վստահորդներին ցույց տրվող իրավաբանական օգնության հետ) կամ փաստաբանական համայնքում իրականացվող այլ հանրային (բացի վիճող կողմերից առնվազն երրորդ անձի ներկայության) վարքագծի հետ (օրինակ՝ Խորհրդի անդամների միջև կամ Խորհրդի և այլ փաստաբանների միջև շփում՝ կապված Խորհրդի գործունեության հետ, վերապատրաստման դասընթացներին և այլ քննարկումներին փաստաբանների միջև շփում և այլն):

Սույն պարագայում, Դիմողի և Պատասխանողի միջև իրավական վեճը բխում է նրանց՝ որպես փաստաբանների կարգավիճակով պայմանավորված գործունեությունից: Մասնավորապես, Դիմողը և Պատասխանողը հանդիսանում են «Attorney at Law» ֆեյսբուքյան խմբի անդամներ, որը միավորում է գերազանցապես փաստաբաններին: Սույն խմբում փաստաբանները կիսվում են մասնագիտական նորություններով, բանավիճում են, քննարկում իրավաբանական գործեր և փաստաբանական համայնքին հուզող խնդիրներ: Սրանից բխում է, որ սույն ֆեյսբուքյան խմբին անդամակցելը և դրանում քննարկումներ իրականացնելը պայմանավորված է նաև փաստաբան լինելու և փաստաբանի կարգավիճակից ելնող գործունեություն իրականացնելու հանգամանքով: Բացի այդ, խմբի յուրաքանչյուր անդամի գործունեությունը խմբում ինքնաբերաբար ձեռք է բերում հանրային բնույթ, քանի որ հասանելի է առնվազն խմբի անդամ հարյուրավոր փաստաբանների և իրավաբանների ծանոթացման և գնահատման համար: Հետևաբար, ֆեյսբուքյան նշված խմբում Պատասխանողի կողմից Դիմողի հասցեին խնդրո առարկա արտահայտություններն անելու ժամանակ նրանք երկուսն էլ հանդես են եկել փաստաբանի կարգավիճակում, քանի որ փաստաբանական ուղղվածության ֆեյսբուքյան խմբին անդամակցելով և այնտեղ գրառումներ կատարելով՝ դրսևորել են փաստաբանական համայնքում իրականացվող հանրային վարքագիծ:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի 5.1.2 ենթակետի դիսպոզիցիայի բովանդակությանը, Պալատի խորհուրդը գտնում է, որ նշված դրույթով նախատեսված պահանջը վերաբերում է փաստաբանի շարունակական ընդհանուր վարքագծին: Փաստաբանական գործունեության ընթացքում փաստաբանների միջև փոխհարաբերություններում քաղաքավարության նորմերից առանձին ոչ էական շեղումները, որոնք փաստաբանի ընդհանուր մասնագիտական վարքաբանության մեջ չունեն տեսակարար կշիռ և չեն բնութագրում փաստաբանի անձը, չեն կարող համարվել Կանոնագրքի նշված ենթակետի խախտում և հանգեցնել այդ ենթակետով փաստաբանի կարգապահական պատասխանատվության:

Սույն կանոնից բացառություն կարող է լինել փաստաբանի կողմից իր մասնագիտական գործընկերոջ նկատմամբ այնպիսի վարքագիծ դրսևորելը, որը

բացահայտորեն և կոպտորեն խախտում է քաղաքավարության կանոնները և փաստաբանների միջնանձնային հարաբերությունների կոռեկտության սկզբունքն ընդհանրապես: Փաստաբանի այդպիսի վարքագծի մեկանգամյա ակտն անգամ կարող է բավարար լինել նրա՝ որպես փաստաբանի անձը բնութագրելու համար:

Վերոնշյալի համատեքստում հատկանշական է, որ փաստաբանի վարքագիծը Կանոնագրքի 5.1.2 ենթակետով որակելու համար պետք է ոչ միայն լինի ոչ քաղաքավարի, այլև ուղեկցվի գործընկեր փաստաբանի անձի նկատմամբ ակնհայտ անվայել վերաբերմունքով:

Սույն պարագայում Պատասխանող «Attorney at Law» ֆեյսբուքյան խմբում կատարել է Դիմողին վերաբերող հետևյալ գրառումը. **«Իսկ այդ նամակի 2-րդ կետին նախորդող պարբերության հեղինակը, որի մտքով անցել է նման պատասխան գրել փաստաբանին, իմ կարծիքով տառապում է կրիտիկիզմով՝ մի հիվանդություն, որը որոշակի անբավարարության հետևանքով ժամանակին շեշտակիորեն դանդաղեցրել կամ առհասարակ կասեցրել է անձի մտավոր զարգացումը: Դրա համար չեմ օգտագործի նրա նկատմամբ վիրավորական արտահայտություն՝ հասկանալով, որ դա ֆիզիկական դիսֆունկցիայի հետևանք է»:**

Սույն գրառմամբ Պատասխանողն իր գործընկերոջ նկատմամբ ոչ միայն դրսևորել է ոչ քաղաքավարի վերաբերմունք, այլև ակնհայտ անվայել վարքագիծ է դրսևորել՝ հրապարակայնորեն քամահրանքով վերաբերվելով Դիմողի՝ որպես փաստաբանի և ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցչի մասնագիտական որակներին և, որ առավել կարևոր է, Դիմողին անվանելով կրիտիկիզմով տառապող անձ, ում վարքագիծը ֆիզիկական դիսֆունկցիայի հետևանք է: Փաստորեն Պատասխանողը Դիմողին վերագրել է մի հիվանդություն, որն իրենից ներկայացնում է մտավոր-հոգեկան էական շեղվածություն և ազդում է հիվանդի բնականոն սոցիալիզացիայի և վարքի ադեկվատության վրա: Ակնհայտ է, որ սրանով փաստաբանը կոպտորեն խախտել է ոչ միայն փաստաբանների միջնանձնային հարաբերությունների քաղաքավարության կանոնները, այլև բացարձակ անվայել և իր գործընկերոջ անձն արատավորելուն նպատակաուղղված վարքագիծ է դրսևորել: Պատասխանողն այդպիսով հրապարակավ ծաղրել է ոչ միայն Դիմողի՝ որպես փաստաբանի մասնագիտական կարողությունները, այլև նրա ընդհանուր վարքը:

Ծաղրը, անիմաստ, անհարկի վիրավորանքը, որն արվում է զուտ անձին վիրավորելու նպատակով, չի կարող պաշտպանվել արտահայտվելու ազատության իրավունքով: Հակառակը պնդել կնշանակի առարկայազուրկ դարձնել Սահմանադրության հիմքում ընկած արժեքը՝ մարդու **արժանապատվությունը**, որն **անօտարելի** է, և որը դիտվում է իր **իրավունքների** և ազատությունների անբակտելի միասնության մեջ:

Պատասխանողի նման վարքագիծը ոչ միայն դուրս է փաստաբանների համայնքում ընդունված բնականոն շփման տարրական կանոններից, այլև հարիր չէ փաստաբանի բարձր կոչումը կրող անձին, ընդհանրապես: Նման վարքագիծ

դրսևորող փաստաբանին քննարկվող արարքի մեկանգամյան դրսևորումն իսկ բավարար է նրա անձի մասնագիտական բարեխղճությունը բնութագրելու համար:

7.3 Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասով

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Վերլուծելով վերը նշված կանոնի պահանջը և այն համադրելով սույն կարգապահական գործով հաստատված փաստերի հետ՝ Խորհուրդը գտնում է, որ Վահե Գրիգորյանի կողմից կատարված արտահայտություններն ուղղված են եղել կոնկրետ փաստաբանին հետևաբար այն կարգավորվում է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերով, ուստի Խորհուրդը Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտում չի արձանագրում:

7.4. Կարգապահական տույժի ընտրությունը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Վարքագծի կանոնների կիրառումը պարտադիր և անհրաժեշտ գործոն է, քանզի փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության ապահովման համար: Փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտականություններ, որոնց շարքում հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանի մասնագիտական հեղինակությունը:

Հանդիսանալով հասարակության հատուկ սուբյեկտ՝ փաստաբանը կոչված է ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը, դրանով իսկ լրջագույն դերակատարում ունենալով արդարադատության իրականացման աջակցման գործընթացում:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Վահե Գրիգորյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները (այդ թվում՝ հրապարակային վիրավորանք հասցնելու), մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ Վահե Գրիգորյանի նկատմամբ պետք է կիրառել հետևյալ հիմնական և լրացուցիչ

տույժերը՝ խիստ նկատողություն և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17027 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Վահե Գրիգորյանին (արտոնագիր 450) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտման համար:

3. Փաստաբան Վահե Գրիգորյանին (արտոնագիր 450) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահե Գրիգորյանին և դիմողին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Սեդրակ Ասատրյան